ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի
նախարարության գլխավոր քարտուղար
ՀԱՍՄԻԿ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ

Հարգելի՛ տիկին Հակոբյան

Ներկայացնում եմ հաշվետվություն 2023 թվականի երրորդ եռամսյակում իմ կողմից իրականացված աշխատանքների վերաբերյալ:

1. Նախարարության վարչության աշխատակիցների հետ մասնակցել եմ բնագավառի 2023-2030 թվականների ռազմավարության նախագծի ուղղությամբ ՀՀ փոխվարչապետի գրասենյակի կողմից ներկայացված դիտողությունները շտկելու և հարցադրումները հստակեցնելու աշխատանքներին:
2. Մասնակցել եմ Համահայկական ամառային 8-րդ խաղերի բացման և բոլոր արարողակարգային միջոցառումների կազմակերպման աշխատանքներին:
3. Ընդգրկվել եմ «Արարատ 73» ֆուտբոլային թիմի հաղթանակի 50 ամյակին նվիրված միջոցառումների կազմակերպման աշխատանքային խմբի կազմում:
4. Շարունակում եմ աշխատել բնագավառի ռազմավարության նախագծում ընդգրկված միջոցառումների իրականացման ուղղությամբ նյութերի հավաքագրմամբ:
5. Նախարարի հրամանով ստեղծված աշխատանքային խմբի կազմում շարունակում եմ ուսումնասիրել մարզիկների բժշկավերականգնողական ազգային կենտրոնի ստեղծման միջազգային փորձը:

Հարգանքով՝

Սպորտի քաղաքականության վարչության
փորձագետ՝ Հարություն Յավրյան

04.10.2023թ.